



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ ՀՈԼԻՎՈՒՏԻ
Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, 10 Մայիսը, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն Ս. Խաչի երեւման տօնն է, միաժամանակ տօնն է մայրերուն: Այս առիթով Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ Ս. Պատարագին, եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ հաւատացեալներուն:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY
AT ST. GARABED CHURCH**

Sunday, May 10th, is the Feast of the Apparition of the Holy Cross, as well as Mother's Day. On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate will preside over Divine Liturgy at St. Garabed Church in Hollywood and will deliver his sermon and well wishes to the faithful.

**ԹԵՄԻՍ ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
37-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ՝ 15 ԵՒ 16 ՄԱՅԻՍԻՆ**

Արեւմտեան մեր Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովի 37-րդ նստաշրջանը պիտի գումարուի Ուրբաթ, Մայիս 15-ին եւ Շաբաթ, Մայիս 16-ին, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, հիւրընկալութեամբ Սան Ֆրանսիսքոյի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հոգաբարձութեան:

Օրակարգի վրայ եւ մեր եկեղեցիներու, վարժարաններու եւ առհասարակ ազգային կեանքի տարբեր կալուածներուն մէջ տարուող աշխատանքներուն ընթացքն ու արդիւնքը:

Ազգային Երեսփոխանական Ժողովի նախօրեակին, եւ նոյն աշխատանքներու ծիրին մէջ, Զորեքշաբթի, 13 Մայիսին Էնսիսոյի Սրբոց

Նահատակաց եկեղեցւոյ «Եղիա Սարաֆեան» դահլիճին մէջ, տեղի պիտի ունենայ Թեմիս հոգեւորականաց համագումարը, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր:

Համագումարը պիտի բանաձեւէ առաջարկներ եւ ծրագիրներ, որոնք պիտի ներկայացուին Ազգային Երեսփոխանական Ժողովի 37-րդ նստաշրջանին:

PRELACY 37TH REPRESENTATIVES ASSEMBLY TO CONVENE ON MAY 15

The Prelacy 37th Representatives Assembly will convene on Friday, May 15th, at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall, hosted by St. Gregory Church of San Francisco.

During the two-day assembly, delegates will hear reports on the activities of our parishes, schools, and committees over the past year, and will discuss plans for the upcoming term.

The annual clergy conference which precedes the Representatives Assembly will take place on Wednesday, May 13th, at the “Yeghia Sarafian” hall of Holy Martyrs Church in Encino, during which clergy members will draft suggestions and proposals to present to the forthcoming Assembly.

ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼԵԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՐԵԱՅ ՀԱՍԱԳՈՒՄԱՐ

Շաբաթ, 16 Մայիսին, տեղի պիտի ունենայ Միջին Արեւելքի Ուղղափառ եկեղեցիներու երիտասարդական կազմերու միօրեայ հաւաք, Սանթա Մոնիքայի Ս. Պետրոս եւ Ս. Պօղոս Ղըպտի Ուղղափառ եկեղեցւոյ մէջ:

Մեր եկեղեցիներու երիտասարդական միութիւններու անդամներ ու անդամուհիներ պիտի մասնակցին սոյն հաւաքին:

ACYA MEMBERS TO PARTICIPATE IN ORTHODOX DAY OF PRAISE

On Saturday, May 16th, the second annual Orthodox Day of Praise will take place at St. Peter and St. Paul Coptic Orthodox Church in Santa Monica, with the participation of youth from the Oriental and Eastern Orthodox Churches.

The gathering is scheduled to begin with Divine Liturgy, following which members of each church will sing hymns in their respective languages.

Members of the ACYA and youth choir will participate in the event.

ՅՕՄ-Ի «ՄԱՅՐ» ՄԱՍՆԱԾԻՂԻ 90-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Կիրակի, 17 Մայիսին, երեկոյեան ժամը 6:00-ին, կազմակերպութեամբ ՅՕՄ-ի Լոս Անճելըսի «Մայր» մասնաճիւղին, պիտի տօնակատարուի մասնաճիւղին 90-ամեակը, Կլենտէյլի «Փալատիօ» սրահին մէջ:

Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ հանդիսութեան եւ պիտի փոխանցէ իր օրհնութեան խօսքը:

PRELATE TO ATTEND 90TH ANNIVERSARY OF A.R.S. "MAYR" CHAPTER

On the evening of Sunday, May 17th, the Los Angeles "Mayr" Chapter of the Armenian Relief Society will celebrate its 90th anniversary at "Palladio" Hall in Glendale.

The Prelate will be in attendance and will convey his blessings.

ՓՐՈՖ. ՅԱՐՈՒԹ ՊԱՐՍԱՄԵԱՆԻ ԳԻՐՔԻՆ ՇՆՈՐՀԱՅԱՆԴԵՍԸ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Կիրակի, 3 Մայիսին, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Փրոֆ. Յարութ Պարսամեանի "Resurrection with Cane and Shoe" հատորին շնորհահանդէսը:



Ձեռնարկը կազմակերպուած էր Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման Յանձնախումբին կողմէ եւ կը վայելէր Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնն ու ներկայութիւնը: Կազմուած էր ինամուած յայտագիր մը. հայերէն եւ անգլերէն լեզուներով

գիրքին ներկայացումը, ապա նաեւ երաժշտական բաժին ու վկայութիւններ. եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը:

Շնորհահանդէսին բացման ու ողջոյնի խօսքը արտասանեց կազմակերպիչ յանձնախումբի ատենապետը, Տիար Հրայր Ճերմակեան: Ան հակիրճ կերպով խօսեցաւ յանձնախումբի աշխատանքի դաշտերուն մասին: Այնուհետեւ, ան բեմ հրաւիրեց Ազգ. Վարչութեան Ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեանը, որպէսզի իբրեւ հանդիսավար՝ ղեկավարէ յայտագիրը:

Տոքթ. Կ. Յակոբեան ներկայացուց հեղինակին հակիրճ կենսագրականը, որ ամենայն մանրամասնությամբ պատկերուած է գիրքին մէջ: Ապա, ան ներկայացուց առաջին բանախօսքը՝ համալսարանի բազմավաստակ դասախօս, Երեւանի Ամերիկեան Համալսարանի հիմնադիր ու մասնագետ ճարտարագետ Փրոֆ. Միհրան Աղպապեանը:



Փրոֆ. Աղպապեան ընդհանուր եւ սեղմ գիծերու մէջ ներկայացուց հատորը, որ Յարութ Պարսամեանի ու ընտանիքին կեանքի փորձառութիւններուն պատմութիւնն է, սկսելով ծննդավայր Հալեպէն, անցնելով Պէյրութէն, ապա «համտեսելով» ներգաղթող բազմահազար հայերու վիճակուած ստալինեան հորհրդային Միութեան-

Հայաստանի դառնութիւնները: Ան կանգ առաւ հեղինակին ու հօր կրած հալածանքներուն ու ապրած դառնութիւններուն վրայ, նկատել տալով, որ հայրենաշինութեան մասնակցութեան մղումով ներգաղթած ընտանիքը, բազմաթիւ ուրիշներու պէս, ենթարկուած է ահաւր տանջանքներու, որոնց հետեւանքով, ընտանիքի անդամներէն կորուստներ ունենալէ ետք, արտագաղթած են Միացեալ Նահանգներ, ուր կերտուած է հեղինակին կեանքի յաջողութիւններու, գիտութեանց ու համալսարանական կալուածներու մէջ արձանագրած յաջողութիւնները, վերականգնումը: Ան վեր առաւ գիրքին այն յատկանիշներուն վրայ, որոնք կը ցոլացնեն հեղինակին լայնածիր ծանօթութիւնները՝ մտաւորականներու ու գիտութեան աշխարհի մարդոց հետ: Ան նշեց, որ Միացեալ Նահանգներ հաստատուելէ ետք, Փրոֆ. Պարսամեան ապրած է վերելք, սակայն հայրենիքին հանդէպ իր յաճնառու կեցուածքին մէջ փոփոխութիւն չէ եղած, այլ ընդհակառակն, ան մեծ ծառայութիւններ մատուցած է Հայաստանին, ինչպէս՝ երկրաշարժէն ետք գիտաժողովներու կազմակերպումով ու մասնակցութեամբ, գիտաշխատողներուն ու կրթական հաստատութեանց նպաստ տրամադրելով, ապահովելով: Վերջապէս, ան նկատել տուաւ, որ հեղինակը քողագերծ ըրած է այն իրականութիւնը, որ ստալինեան հորհրդային Միութիւնը Հայաստանի ու հայութեան շահերուն համար չէր որ կազմակերպէր էր ներգաղթը: Ան իր խօսքը եզրափակեց շնորհակալութիւն յայտնելով հեղինակին, որ իր փորձառութեանց հաղորդակից դարձուցած է ընթերցողը:

Յաջորդ բանախօսը ներկայացնելէ առաջ, հանդիսավարը կանգ առաւ Փրոֆ. Յարութ Պարսամեանի հայրենասերի յատկանիշին վրայ: Այնուհետեւ ան բեմ հրաւիրեց երկրորդ բանախօսը՝ օդանաւային ճարտարարուեստի մէջ գիտաշխատող ու գիտնական Տիգրան Պարսամը:

Հեղինակին մասին հակիրճ ծանօթութիւններէ ետք, Տ. Պարսամ, հատորին բաժիններէն մանրապատումներ ու դրուագներ վեր առնելով,

ներկայացուց հեղինակին ու անոր ընտանիքին դառն փորձառութիւնները, բռնատիրական դրութիւնը յաղթահարելու, շրջանցելու համար անոնց ի գործ դրած հնարամտութիւնները, ապա նաեւ արձանագրած յաջողութիւնները, անարդարութեան դեմ ամուր կեցուածքը, իսկ այս բոլորին կողքին՝ զուարթախոհութիւնն ու լաւատեսութիւնը:

Գեղարուեստական յայտագիրին կենսագործումը վստահուած էր Արմինէ եւ Քնարիկ Ներկարարեան շնորհալի քոյրերուն. առաջինը ջութակի վրայ ներկայացուի «Կռունկ»ը, իսկ երկրորդը երգեց «Սիրոյ մեղեդի» (Յայուհի գեղեցիկ...) երգը. դաշնակի վրայ անոնց ընկերացաւ Աննա Վորովիչ:

Յեղինակին ու գիրքին մասին վկայութիւններ տուին Տիկին Մարի Թերզեան եւ Տիար Սարգիս Մահտերեճեան:

Շնորհահանդեսին փակման խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը: Ան գնահատանք արձանագրեց յայտագիրին բոլոր մասնակիցներուն, անկեղծ ու առինքնող խօսքերուն ու արտայայտութեանց համար: Ան նշեց, որ իբրեւ հաւատացեալ քրիստոնէաներ՝ գիտենք, որ կարելի է յաղթահարել մարմնական տկարութիւններու, կեանք ու վաստակ կերտել արիաբար, եւ նոյնքան կարելորութեամբ հետամուտ ըլլալ երկինքի արքայութիւնը շահելու: Ան նկատել տուաւ, որ հեղինակը կը պատկանի այն խմբակին, որ կեանքի պատերազմը մղած է, յոյսը չէ կորսնցուցած ու յաղթանակ կերտած, հաւատքը ամուր պահած՝ հասած է երազներու իրականացման: Ան եղած է ու կը մնայ հայրենասէր, հակառակ Խորհրդային Յայաստանի մէջ իր, ընտանիքին ու նմաններու վիճակուած դառնութիւններուն. այս հատորը պերճախօս վկայութիւն է այս յատկութեան:

Խօսելով գիրքին պատկերած վիճակներուն մասին, ան նշեց, որ անմեղ ու հաճելի մանկութենէ մը ետք, հեղինակն ու ընտանիքը ապրած են հայրենիքի կերտումին մասնակցութեան յոյսի կորուստն ու անոր հետեւող դառնութիւններ, սակայն պահպանած՝ հայ ընտանիքի ու հայութեան արժէքները: Ան բարձր գնահատեց հեղինակին լաւատեսի, հետեւողականութեան ու գիտութեանց հետամտութեան արժանիքները, բայց մանաւանդ ողջունեց անոր բարերարի՝ ժողովուրդին ու նորահաս սերունդներուն բարիք բաշխելու անոր պատրաստակամութիւնը, որ անցեալ ամանորին արտայայտութիւն գտաւ Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ նոր հիմնադրամի մը հաստատումով, հիմնադրամ՝ որ կը կրէ Փրոֆ. Յարութ Պարսամեանի անունը եւ որուն հասոյթը պիտի տրամադրուի հաշմանդամ հայ ուսանողներու: Ան իր խօսքը եզրափակեց նկատել տալով, որ այս գիրքը ազնուութեան, նուիրումի, հայրենասիրութեան ու վաղուան արշալոյսի յոյսին արտայայտութիւնն է, հեղինակի այս յատկանիշներուն արտացոլացումը կը հանդիսանայ:

Յանդիսութիւնը վերջ գտաւ Առաջնորդ Սրբազանին աղօթքով: Ապա, ներկաները վայելեցին պատշաճ հիւրասիրութիւն մը, ունեցան հատորէն մակագրուած օրինակներ ու մտերմիկ գրոյց ունեցան հեղինակին հետ:

PRESENTATION OF PROFESSOR HARUT BARSAMIAN'S "RESURRECTION WITH CANE AND SHOE"

Under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, on the afternoon of Sunday, May 3rd, 2009, the presentation of Prof. Harut Barsamian's memoirs *Resurrection with Cane and Shoe* took place at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall. The event was organized by the Western Prelacy Outreach Committee.



The program began with opening remarks by Chairman of the Outreach Committee Mr. Herair Jermakian, who gave a brief explanation on the objective of the Outreach Committee and the types of events it organizes throughout the year to foster the mission of the Prelacy. Mr. Jermakian then invited Executive Council Chairman and

Master of Ceremonies Dr. Garo Agopian to the podium.

Dr. Agopian gave an overview of the momentous phases in Prof. Barsamian's life, the details of which are recorded in the book, then invited the first speaker, renowned engineer and Professor Mihran Agbabian to present the book in Armenian.

In presenting the book, Professor Agbabian spoke of Prof. Barsamian's life from his birth in Aleppo, to his move to Beirut, to the family's repatriation to Soviet Armenia where the author and his family experienced overwhelming challenges under the oppressive regime, and his eventual settlement in America where he underwent a "resurrection", becoming a sought after academician and professor of Engineering and Computer Science. Professor Agbabian noted that despite his struggles and disillusionment while living in Soviet Armenia, Prof. Barsamian remained and remains to this day a true patriot and continues to offer his assistance and contributes to the progress and prosperity of Armenia. He concluded by thanking the author for allowing readers a glimpse into his extraordinary life and experiences.

Dr. Agopian invited the next speaker, prominent aerospace engineer Mr. Dickran Barsam, to offer his remarks in English. Mr. Barsam outlined the hardship and misfortune the family experienced as repatriates in Soviet Armenia, including the author's father's exile and later the author's exile to Siberia, noting the author's optimism and jovial disposition amid that adversity and his eventual triumph and rebirth.

The program also featured musical presentations by sisters Armine Nerkararyan (violin) and Kenarik Nerkararyan (song), accompanied on the piano by Anna Vorovich.

Mrs. Mary Terzian and Mr. Sarkis Mahserejian were subsequently invited to the podium to offer their comments on the book.

The program closed with the Prelate's remarks and benediction. The Prelate acclaimed the author for his unwavering faith, optimism, and perseverance in rising above his physical disability and the unbelievable challenges he faced throughout his life to achieve his dreams and reach great heights. The Prelate further noted that through it all, the family retained their love of their homeland and Armenian heritage. In addition, the Prelate highly commended Prof. Barsamian for his devotion to the welfare of future generations of Armenian students as evidenced by his establishing the "Harut Barsamian Disabled Armenian Students Scholarship Fund".

The program concluded with the Prelate's benediction, after which the author met with the guests and autographed copies of his book.
